ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № N90-Լ

«03» 11 2023 թ. գ. Երևան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱՌՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1674-Լ որոշմամբ ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին N 1978-Լ որոշման մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ և հաստատվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագիրը:

Իրականացվող դատաիրավական բարեփոխումների ընդհանուր համատեքստում մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունն ուղենշային նշանակություն ունի մարդու իրավունքների և օրենքի գերակայության ապահովման, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրավապահ մարմինների կարողությունների շարունակական բարելավման տեսանկյունից: Հիշյալ ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով նախատեսված մի շարք գործողությունների կատարման համար որպես համակատարող է նախատեսված նաև ՀՀ դատախազությունը, ինչով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել սահմանել ՀՀ դատախազության այն պատասխանատու ստորաբաժանումների

շրջանակը, որոնց գործառույթներին առնչվող ոլորտներին է առավելապես վերաբերում նախատեսված միջոցառումների իրականացումը:

Հիմք ընդունելով մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված՝ ՀՀ դատախազության մասնակցությունը ներառող գործողությունների ժամանակին և պատշաճ մակարդակով իրականացնելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով նախատեսված՝ ՀՀ դատախազության մասնակցությունը ներառող գործողությունների իրականացման համար նշանակել պատասխանատու ստորաբաժանումներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի հավելվածի առանձին տողերում նշված առաջին պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին՝ մյուս պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների հետ (առկայության դեպքում) մշակել աշխատանքային ժամանակացույց այնպես, որ հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը, վերոհիշյալ իրավական ակտերով նախատեսված՝ ՀՀ դատախազության կողմից շահագրգիռ պետական մարմիններ տեղեկատվության տրամադրման վերջնաժամկետից առնվազն երկու շաբաթ առաջ, ներկայացվի ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն:

3. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝ ապահովել ստացված տեղեկատվության համակարգումը և սահմանված ժամկետներում տրամադրումը շահագրգիռ պետական մարմիններին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի դատախազի պաշտոնակատարին, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Հավելված

ՀՀ գլխավոր դատախազի 2023 թվականի
նոյեմբերի 3 -ի N 90L հրամանի

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ			
Գործողությունների ծրագրի համապատասխան կետը	**Բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Պատասխանատու ստորաբաժանումը**
1.1	Զինված ուժերում ամրապնդել հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտը՝ որպես ԶՈՒ-ում կյանքի իրավունքի իրացման հիմնական բաղադրիչ	2023 թվականի երկրորդ կիսամյակից 2025 թվական	ՀՀ զինվորական դատախազ
2.6	Վերապատրաստել քրեակատարողական ծառայության ղեկավար և ոչ ղեկավար կազմի ծառայողներին, զինծառայողների նկատմամբ բռնության դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող զինվորական դատախազներին և վարույթ իրականացնող քննիչներին ու դատավորներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով:	2024 թվականի առաջին կիսամյակից 2025 թվական	ՀՀ զինվորական դատախազ
2.12	Ընդունել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ	2024 թվականի առաջին կիսամյակից 2024 թվականի երկրորդ կիսամյակ	Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, Կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, Երևան քաղաքի դատախազ, Կենտրոն և Նորք-Մարաշ

			վարչական շրջանների դատախազ, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ, Լոռու մարզի դատախազ, Տավուշի մարզի դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Լալա Բեգոյան
4.7	Ոստիկանության, քննչական մարմինների, դատախազության համար մշակել և հաստատել խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների քննության շարժառիթով գործերի քննության ուղեցույցներ	2024 թվականի երկրորդ կիսամյակից 2025 թվականի առաջին կիսամյակ	Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, Երևան քաղաքի դատախազ, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ, Գեղարքունիքի մարզի դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Եվա Սաղոյան
10.2	Սահմանել երեխաների իրավունքների խախտումների հասկացությունը և ստեղծել դրա հաշվառման ու վարման միասնական վիճակագրական համակարգ՝ սահմանելով «երեխայի իրավունքների խախտում» հասկացությունը և լիազորող նորմ՝ երեխայի իրավունքների հաշվառման և վարման միասնական վիճակագրական համակարգի վերաբերյալ	2023 թվականի երկրորդ կիսամյակից 2025 թվական	ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Աշոտ Ժամկոչյան, Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերվ վարչության պետ